


Բյուջետային ծախսերի կառուցվածքի ազդեցությունը տնտեսական աճի վրա (ՀՀ օրինակով)

Գրիգորյան Կարեն Հ.

*տ.գ.թ., Մակրոէկոնոմիկայի ամբիոնի դոցենտ,
Հայաստանի պետական տնտեսագիտական համալսարան (Երևան, ՀՀ)*

 <https://orcid.org/0000-0001-7359-3407>

kgrigoryanh@gmail.com

Չափանյան Թադուհի Ս.

կառավարման ամբիոնի ասպիրանտ,

Հայաստանի Հանրապետության պետական կառավարման ակադեմիա (Երևան, ՀՀ)

 <https://orcid.org/0009-0007-9759-6558>

taguhichapanyan@gmail.com

ՀՏԳ՝ 336.5; **EDN:** MNRIBY; **JEL:** H51, H52, H53, H54, H55, E62;

DOI: 10.58587/18292437-2024.4-204

Հանգուցաբառեր և բառակապակցություններ՝ բյուջետային ծախսեր, տնտեսական աճ, արտադրողական ծախս, ոչ արտադրողական ծախս

Влияние структуры расходов бюджета на экономический рост (на примере РА)

Григорян Карен Г.

к.э.н., доцент кафедры управления,

Армянский государственный экономический университет (Ереван, РА)

Чапаян Тагуи С.

аспирант кафедры управления,

Академия государственного управления Республики Армения (Ереван, РА)

Аннотация. Государственный бюджет является важным рычагом государственного регулирования экономики: он отражает основные направления и приоритеты государственной экономической политики. В этом контексте много дискуссий ведется о динамике мультипликатора государственных расходов, а также о взаимодействии структуры этих расходов и экономического роста. Исследование динамики мультипликатора бюджетных расходов Армении за последние 15 лет показывает, что он был выше 1, составляя в среднем 4,5 пункта. В результате исследования мы оценили влияние бюджетных расходов Армении на экономический рост с помощью эконометрической модели, основанной на квартальных данных за 2008-2023 годы. Результаты исследования показывают, что рост производительные расходы государственного бюджета Армении, таких как расходы на образование, здравоохранение и национальную экономику, способствует темпам роста ВВП, в то время как распределение государственных средств на непроизводительные расходы, такие как расходы на оборону и социальный сектор, оказывает отрицательное влияние на темпы роста ВВП.

Ключевые слова и словосочетания: бюджетные расходы, экономический рост, производственные расходы, непроизводственные расходы

The impact of the public expenditures structure on economic growth: Case of Armenia

Grigoryan Karen H.

PhD in Economics, Associate Professor of the Chair of Macroeconomics of the

Armenian State University of Economics (Yerevan, RA)

Chapanyan Taguhi S.

PhD student of the Chair of Administration of the Public Administration Academy of the RA (Yerevan, RA)

Annotation: The public budget is an important lever for the state regulation of the economy: it reflects the main directions and priorities of the state economic policy. In this context, there is a lot of discussion about the dynamics of the public expenditure multiplier, as well as the interaction between the structure of these expenditures and economic growth. The study of the dynamics of the multiplier of budgetary expenditures of Armenia over the last 15 years shows that it was higher than 1, making an average of 4.5 points. As a result of the research, we evaluated the impact of Armenia's budgetary expenditures on economic growth using an econometric model, based on quarterly data from 2008-2023. The results of the research show that the increase in the productive expenditures of the state budget in Armenia, such as those spent on education, healthcare and the national economy, contribute to the GDP growth rate, while the allocation of public funds to non-productive expenditures, such as defense and social sector expenditures, has a negative impact on the GDP growth rate.

Keywords & phrases: public expenditure, economic growth, productive expenditures, non-productive expenditure

Ներածություն

Վերջին ժամանակներում շատ երկրներ կախված մի շարք գործոններից, ինչպիսիք են՝ տնտեսական ճգնաժամերը, սոցիալական ծառայությունների պահանջարկի աճը, ռեսուրսների բաշխման և վերաբաշխման կարողությունները, գնաճը և այլն, հակված են մեծացնել բյուջեի ծախսերը, մյուս կողմից, յուրաքանչյուր կառավարության արդյունավետության չափորոշիչներից է տնտեսական աճը, հետևաբար կառավարությունները փորձում են բացահայտել այն ուղիները, որոնք կնպաստեն տնտեսական աճին: Այս մրցապայքարում ակնհայտ փաստ է, որ պետական ծախսերը տնտեսական աճի վրա ազդելու հզոր գործիք են: Այս տեսանկյունից առաջ է գալիս երկու հարց՝ պետական ծախսերի ավելացումը նպաստում, թե խոչընդոտում է տնտեսական աճը, և պետական բյուջեի ծախսերի կառուցվածքը ինչպիսի փոխազդեցության մեջ է տնտեսական աճի հետ: Այսպիսով, քաղաքականություն մշակողների հիմնական նպատակը պետք է լինի գտնել ծախսերի այն օպտիմալ կառուցվածքը, որը կապահովի ավելի մեծ տնտեսական աճ, և միևնույն ժամանակ կառավարության համար կլինի առաջնահերթություն: Տնտեսագիտության մեջ բյուջետային ծախսերի տնտեսական աճի վրա ազդեցությունը քանակականացվում է պետական ծախսերի բազմարկյի հաշվարկով, որը բնութագրում է ՀՆԱ-ի աճի և դրանց աճի հարաբերակցությունը: Սույն հոդվածի նպատակն է բացահայտել այն ծախսային կառուցվածքը, որը Հայաստանին հնարավորություն կտա ապահովել ավելի բարձր տնտեսական աճ:

Գրականության ակնարկ.

Պետական ծախսերը պետության ֆինանսական գործունեության կողմերից մեկն են [11, էջ 95]: Պետական ծախսերը պետության կողմից բյուջեից, արտաբյուջետային միջոցների և պետական ձեռնարկությունների, ասոցիացիաների և կազմակերպությունների սեփական միջոցների շարունակական օգտագործումն է բյուջեի, արտաբյուջետային միջոցների, կառավարության նորմատիվ իրավական ակտերով սահմանված նպատակների և օբյեկտների համար [6, էջ 102]: Պետական ծախսերի չափը որոշվում է նրա խնդիրներով և կարիքներով՝ արտահայտված պետության կանխատեսումներով, նպատակային ծրագրերով և պլաններով: Ծախսեր կատարելիս պետությունն անմիջական ազդեցություն ունի տնտեսության վրա՝ ավելացնելով կամ նվազեցնելով տնտեսության առանձին ճյուղերի վրա կատարվող ծախսերի ընդհանուր ծավալը:

Պետական ծախսերի ազդեցությունը տնտեսության վրա դրսևորվում է ոչ միայն ելնելով դրանց ընդհանուր ծավալից, այլ նաև

դրանց իրականացման եղանակներից: Ծախսերի անհրաժեշտության բացահայտումը թույլ է տալիս որոշել հարկաբյուջետային քաղաքականությունը: Այս մոտեցումը ենթադրում է հիմնական ծախսերի հոդվածների սահմանված չափը, բյուջետավորման համակարգված ընթացակարգը [10, էջ 28]:

Պետական ծախսերի և տնտեսական աճի փոխազդեցության ուսումնասիրության հարցում հետազոտողները հարատև բանավիճի մեջ են՝ մի մասը գտնում է, որ բյուջետային ծախսերի աճը նպաստում է տնտեսական աճին, մյուս մասը ընդհակառակը գտնում է, որ այն արգելակում է տնտեսական աճը: Տնտեսական աճի վրա բյուջետային ծախսերի ազդեցությունից զատ շատ հետազոտողներ կենտրոնանում են ծախսերի կառուցվածքի ուսումնասիրության վրա: Այսպես օրինակ Բոսեն և այլոք (2007 թ.) եզրակացրել են, որ պետական ծախսերը տնտեսական աճի վրա ունեն դրական ազդեցություն, ելնելով զարգացող երկրների օրինակից: Իրենց հոդվածում նրանք իրականացրել են պանելային վերլուծություն 30 զարգացող երկրների համար (1970-1980-ական թթ.) հետազոտելով պետական ծախսերի աճի ազդեցությունը՝ հատուկ ուշադրություն դարձնելով տարանջատված պետական ծախսերին: Օգտագործվող մեթոդաբանությունում հաշվի է առնվում պետական բյուջեի սահմանափակումները և հնարավոր շեղումներ են դուրս բերվել չդիտարկվող փոփոխականներից: Նրանք բացահայտեցին, որ պետական կապիտալ ծախսերը դրական և կարևոր կապ ունեն տնտեսական աճի հետ: Ավելին, առանձնացված մակարդակում պետական ներդրումները կրթության ոլորտում և կրթության վրա կատարվող ընդհանուր ծախսերը միակ ծախսերն են, որոնք դրական ազդեցություն ունեն տնտեսական աճի վրա՝ բյուջետային սահմանափակումների և չդիտարկվող փոփոխականների հաշվառումից հետո [12, էջ 549]:

Ղոշը և Գրեգորիուն (2008 թ.) նույնպես բացահայտեցին կապ տարանջատված պետական ծախսերի և տնտեսական աճի միջև, դիտարկելով 15 զարգացող երկրների ցուցանիշները՝ պահի ընդհանուր մեթոդներով (GMM): Արդյունքները ցույց տվեցին, որ կա խորը կապ դիտարկվող պետական ծախսերի տեսակի հետ՝ կապիտալ կամ ընթացիկ: Հետագա ուսումնասիրությունները հանգեցրին այն արդյունքին, որ գործառնական և պահպանման ծախսերը ավելի մեծ ազդեցություն ունեն տնտեսական աճի վրա, քան կրթության և առողջապահության վրա կատարվող ծախսերը [21, էջ 86]:

Վերջին ժամանակներս լայն տարածում գտած ընդհանուր հավասարակշռության դինամիկ ստոխաստիկ մոդելավորման (DSGE) հիման

վրա Ստրաուբի կատարած հետազոտությունները, Եվրոպական երկրների վերաբերյալ, հանգեցրին այն եզրակույթանը, որ տնտեսական աճի վրա արտադրության, սպառման, իրական աշխատավարձի երկարաժամկետ ազդեցությունը բացասական, մինչ դեռ կապիտալ ծախսերի ազդեցությունը դրական է [23, էջ 20]:

Գրեթե նույն մեթոդաբանությամբ Շահիդը (2013 թ.) ուսումնասիրեց Պակիստանում պետական ծախսերի ազդեցությունը տնտեսական աճի վրա, դիտարկման համար հիմք ընդունելով 1972-2009 թթ. ժամանակաշրջանը: Նա պետական ծախսերը բաժանեց զարգացման ծախսերի և ընթացիկ ծախսերի բաղադրիչների: Օգտագործելով ավտոռեգրեսիվ բաշխված շարքերի մոդելը (ARDL) բացահայտեց, որ Պակիստանում զարգացման ծախսերը դրական են ազդում տնտեսական աճի վրա [22, էջ 1016]:

Մինչ դեռ, Բուտկիևիչը և Յանիկկայան (2011 թ.) Էմպիրիկ հետազոտությամբ փորձեցին պարզել համախմբված և տարանջատված պետական ծախսերի ազդեցությունը տնտեսական աճի վրա օգտագործելով մոտավորապես 100 զարգացած և զարգացող երկրների օրինակ: Հիմնված լինելով արտաքին ոչ կապակցված հավասարման (Seemingly-Unrelated Regression (SUR)) մեթոդի վրա եզրակացնում են, որ չնայած հիմնական նմուշի միջև առկա անհամապատասխանություններին, համախմբված պետական ծախսերը, ինչպես նաև սպառողական ծախսերը բացասաբար են ազդում ուսումնասիրվող երկրներում տնտեսական աճի վրա: Անարդյունավետ կառավարություն ունեցող զարգացող երկրներում պետական սպառման ծախսերի յուրաքանչյուր 1%-ը նվազեցնում է տնտեսական աճը 0,1 %-ով [13, էջ 338]:

Գոռթնիի կողմից ՏՀԶԿ 23 երկրներից ստացված տվյալների Էմպիրիկ վերլուծությունը ցույց է տալիս, որ առկա է ուժեղ բացասական կապ ա) կառավարության չափի և ՀՆԱ-ի աճի և բ) պետական ծախսերի աճի և ՀՆԱ-ի աճի միջև: Այսպես՝ ՀՆԱ-ում պետական ծախսերի 10% աճը բերում է իրական ՀՆԱ-ի 1 տոկոսային կետով նվազման: Ըստ նրա կա որոշակի սահմանային շեմ որից հետո պետական ծախսերի աճը բերում է ՀՆԱ-ի նվազման, պետությունները պետք է ծախսեն ոչ ավել, քան ՀՆԱ-ի 15 տոկոսը, հետևաբար կառավարությունները պետք է կենտրոնանան իրենց հիմնական գործառնությունների կատարման վրա [19, էջ 1]:

Հասնուլին (2015 թ.) ուսումնասիրեց Մալագիայում պետական ծախսերի և տնտեսական աճի միջև առկա կապերը՝ հիմք ընդունելով 1970-2014 թթ. ժամանակաշրջանը: Մի կողմից պետական ծախսերը տարանջատվել են կառավարական գործառնական և զարգացման ծախսերի: Մյուս կողմից, պետական ծախսերը տարան-

ջատվել են ըստ այն ոլորտների, որտեղ այդ ծախսերը կատարվում են: Օգտագործելով սովորական նվազագույն քառակուսիների մեթոդը (OLS) վերլուծվել և բացահայտվել է, որ ուսումնասիրվող երկրներում գոյություն ունի բացասական հարաբերություն համախառն պետական ծախսերի և տնտեսական աճի միջև: Ուսումնասիրության արդյունքները հաստատում են, որ Մալագիայում պետական ծախսերի զարգացման տեսակը և տնային տնտեսությունների հատվածը նույնպես բացասական են ազդում աճի վրա [20, էջ 27]: Գրիգորյանը և այլք (2021 թ.) գնահատելով պետական կապիտալ ներդրումների ազդեցությունը տնտեսական աճի վրա բացահայտել են, որ պետական ներդրումները էական դրական ազդեցություն ունեն ՎՎՀՆԱ-ի և այլ մակրոտնտեսական փոփոխականների վրա [18, էջ 47]: Գրիգորյանը (2020 թ.) նաև նշել է, որ «*ըստ երկարաժամկետ կանխատեսումների՝ զարգացող տնտեսությունները առաջիկա 20 տարում կստեղծեն համաշխարհային ՀՆԱ-ի կեսից ավելին: Այս տեսանկյունից համաշխարհային տնտեսությունը բնութագրող հիմնական միտումներից մեկը եկամուտների կոնվերգենցիան է*» [17, էջ 21]:

Հետազոտության մեթոդաբանությունը.

Բյուջետային ծախսերի փոփոխության տնտեսական աճի վրա ունեցած ազդեցությունը բացահայտելու նպատակով նախ և առաջ դիտարկել ենք բյուջետային ծախսերի բազմարկչի դինամիկան՝ 2008 թ. մինչև 2023 թ.: Ծախսերի բազմարկչի (մուլտիպլիկատոր) գործակից է, որը հավասար է ՀՆԱ-ի (Y) արժեքի փոփոխության հարաբերակցությանը պետական (և այլ) ծախսերի (G) փոփոխությանը, $K = \frac{\Delta Y}{\Delta G}$ և $\Delta Y = K * \Delta G$ [7, էջ 29]:

Հայաստանում պետական բյուջեի ծախսերի ազդեցությունը տնտեսական աճի վրա քանակապես գնահատելու նպատակով մենք օգտագործում ենք Էմպիրիկ մեթոդաբանություն, որը հիմնված է փոքրագույն քառակուսիների մեթոդի վրա: Մոդելը կառուցելու համար կիրառվել են ՀՀ վիճակագրական կոմիտեի կողմից հրապարակվող եռամսյակային տվյալները, որոնք ընդգրկում են 2008 թ. մինչ 2023 թ. ընկած ժամանակահատվածը: Մեր մոդելն ունի հետևյալ տեսքը՝

$$GDP = F(ECO, DEF, HLT, EDU, SOC) \quad (1)$$

$$GDP_t = \beta_0 + \beta_1 ECO_t + \beta_2 DEF_t + \beta_3 HLT_t + \beta_4 EDU_t + \beta_5 SOC_t + \varepsilon_t \dots \dots \dots (2)$$

Որտեղ.

• **GDP** - **համախառն ներքին արդյունք**, շուկայական գներով:

• **ECO** - **ազգային տնտեսության վրա կատարված ծախսեր**, որը ներառում է «ընդհանուր բնույթի հանրային ծառայություններ»,

«տնտեսական հարաբերություններ», «բնակարանային շինարարություն և կոմունալ ծառայություններ» ցուցանիշների հանրագումարը,

- **DEF- ազգային անվտանգության վրա կատարված ծախսեր**, որոնք ներառում են «Պաշտպանություն», «Հասարակական կարգ, անվտանգություն և դատական գործունեություն» ցուցանիշների հանրագումարը,

- **HLT-առողջապահության վրա կատարված ծախսեր**,

- **EDU-կրթության վրա կատարված ծախսեր**,

- **SOC-Բյուջեի ծախսերը սոցիալական քաղաքականության վրա՝ «Սոցիալական պաշտպանություն» ցուցանիշը,**


Մոդելում բացատրվող փոփոխականը GDP պարամետրն է, որը կախված է պետական բյուջեի ծախսերից՝ ըստ գործառնական դասակարգման խմբերի:

Մոդելում ավտոկոռելյացիայից խուսափելու նպատակով վերցված են տվյալ ցուցանիշի գծով եռամսյակային աճի տեմպերը՝ տարին տարվա վրա կտրվածքով: Ժամանակագրական շարքերը նախապես սեզոնայնորեն հարթեցվել են: Մոդելը գնահատվել է EViews 12 ծրագրի միջոցով:

Հետազոտություն.

Վերջին մի քանի տարիների ընթացքում Հայաստանի տնտեսական ցուցանիշները անկախ՝ ներքին և արտաքին տնտեսական շուկերից գրանցել են բավականին դրական արդյունքներ: Այսպես, 2023 թ. գրանցվել է ՀՆԱ-ի 8.7% իրական աճ: 2023 թ. տնտեսության բոլոր ճյուղերում գրանցվել է ավելացված արժեքի աճ: Տնտեսական աճն ուղեկցվել է ներքին և արտաքին պահանջարկի աճով: Ներքին պահանջարկի աճին նպաստել է նաև պետական ծախսերի ավելացումը՝ որը 2023 թ. նախորդ տարվա համեմատությամբ աճել է 13.6%-ով:


Գծապատկեր 1. ՀՆԱ-ի և բյուջետային ծախսերի դինամիկան 2008-2023 թթ. [4; 5]



Գծապատկեր 1-ում կարելի է տեսնել, որ ՀՆԱ-ն և բյուջետային անվանական ծախսերը ունեն հստակ դրական, գրեթե միատեսակ միտում: Բացառությամբ ճգնաժամային ժամանա-

կաշրջանների, երբ նկատվում է արտադրության ծավալների անկում և միաժամանակ պետական ծախսերի աճ:


Գծապատկեր 2. ՀՆԱ-ի և բյուջետային ծախսերի աճի դինամիկան 2008-2023 թթ.



Համաձայն Գծապատկեր 2-ի ՀՆԱ-ի և պետական ծախսերի տարեկան աճի դինամիկան հեռու է նույնքան միատեսակ լինելուց, որքան դրանց բացարձակ տարեկան ցուցանիշները: ՀՆԱ-ի առումով հստակ տեսանելի են 2008 թ. և 2020 թ. ճգնաժամերը, իսկ բյուջետային ծախսերի տեսանկյունից ան արձանագրվել է նույնաման ձևով 2008 թ. և 2020 թ., ինչը բացատրվում է ճգնաժամային իրավիճակներում տնտեսության խթանման պետական քաղաքականու-

թյամբ, միաժամանակ վերջին տարիներին բարձր տնտեսական աճի պայմաններում նկատվում է բյուջետային ծախսերի աճ, բացառությամբ, 2018 թ. 5.2% տնտեսական աճի պայմաններում նկատվում է բյուջետային ծախսերի նվազում: Այսպիսով, ստացված դինամիկայից դժվար է բացահայտել պատճառահետևանքային կապը բյուջեի ծախսերի աճի ՀՆԱ-ի վրա ազդեցության վերաբերյալ, երբ մեկ ցուցանիշը նվազում է մյուսն աճում է և հակառակը:

Գծապատկեր 3. ՀՀ բյուջետային ծախսերի բազմարկիչի դինամիկան 2008-2023 թթ.




Միևնույն ժամանակ, վերլուծելով պետական ծախսերի բազմարկիչի դինամիկան ըստ Գծապատկեր 3, ճգնաժամերի ժամանակ բազմարկիչը ունի հստակ նվազման միտում: 2018 թ. ՀՆԱ աճին զուգահեռ արձանագրվել է բյուջետային ծախսերի նվազում, ինչը բացատրվում է կառավարության կողմից իրականացվող զսպող հարկաբյուջետային քաղաքականությամբ: Կարևոր եզրակացություն է այն փաստը, որ բազմարկիչն իսկապես գոյություն ունի, այսինքն՝ համեմատաբար երկար ժամանակամիջոցում պետական ծախսերի 1 միավորով ավելացումը ապահովում է արտադրության ծավալների մեկից ավել ավելացման: Առանց 2008, 2018 և 2020 թվականների բազմարկիչն առնվազն 6.6 միավոր է: Միջին հաշվով 15 տարվա ընթացքում ՀՀ բյուջեի ծախսերի բազմարկիչը 4.5 միավոր է:

Պետական ծախսերի բովանդակությունը և կառուցվածքը որոշվում են պետության ծրագրերով և այն կոնկրետ խնդիրներով, որոնք լուծվում են յուրաքանչյուր ֆինանսական տարում [9, էջ 35]: Բյուջետային ծախսերի ծավալը և կառուցվածքը մեծապես կանխորոշված են իշխանությունների պարտավորություններով, որոնք բխում են նախկինում ընդունված օրենս-

դրական և կարգավորող ակտերից և կնքված պայմանագրերից, համաձայնագրերից, գործող բյուջետային ծրագրերից և այլ պարտավորություններից [8, էջ 32]: Բյուջետային ծախսերը հանդիսանում են երկրի սոցիալ-տնտեսական քաղաքականության հիմնական ցուցանիշները: Սոցիալ-տնտեսական զարգացմանն ուղղված երկրի պարտավորությունները պահանջում են հավասարակշռված, ուղղորդված քայլեր, ներառյալ բյուջեի ծախսերի համախմբումը սոցիալ-տնտեսական զարգացման կարևորագույն, ռազմավարական ոլորտներում: Այսպես, բյուջետային ծախսերի ֆունկցիոնալ դասակարգումը արտացոլում է երկրի նպատակները: Այս ծախսերը ցույց են տալիս երկրի սոցիալ-տնտեսական զարգացման բազմավեկտոր ոլորտները և առաջնահերթությունները, իսկ բյուջեի ծախսերի չափը կախված է երկրի տնտեսական վիճակից և սոցիալական առաջնահերթություններից: Որքան մեծ է բյուջեն և բյուջեի ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում, այնքան ավելի շատ ֆինանսական միջոցներ են վերաբաշխվում դրա միջոցով և, համապատասխանաբար, մեծանում են բնակչությանը մատուցվող հանրային ապրանքների և ծառայությունների ծավալը:

Գծապատկեր 4. ՀՀ բյուջետային ծախսերի գործառնական դասակարգումը (բաժինը ընդհանուր ծախսերում և ՀՆԱ-ում, %) [5]



Ընդհանուր բյուջետային ծախսերում ամենամեծ տեսակարար կշիռը պատկանում է Սոցիալական պաշտպանությանը՝ 27.7%, այս ոլորտում սոցիալական պաշտպանության ոլորտում պետական քաղաքականության հիմնական նպատակն է երկրում աղքատության մակարդակի էական կրճատումը, ժողովրդագրական իրավիճակի բարելավումն և ՀՀ բնակչության առանձին խմբերի համար սոցիալական երաշխիքների ապահովումը: Սոցիալական պաշտպանության ծախսերի տեսակարար կշիռը ՀՆԱ-ում դինամիկ աճ է գրանցել: 2023 թ. այս ծախսերը ՀՆԱ-ի մեջ 7.4% է կազմել: Համեմատության համար նշենք, որ վերջին տարիներին¹ հարևան երկրներում՝ Վրաստան, Ադրբեջան, Թուրքիա սոցիալական պաշտպանության ծախսերի տեսակարար կշիռը ընդհանուր ծախսերում կազմել է համապատասխանաբար 26, 19 և 31 տոկոս, Ռուսաստանի Դաշնությունում այս ցուցանիշը կազմում է 32 տոկոս, Բայթյան երկրներում՝ 33 տոկոս, զարգացած եվրոպական երկրներում (Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրիա, Իտալիա)՝ 40-44 տոկոս, իսկ ընդգծված սոցիալական կողմորոշում ունեցող սկանդինավյան երկրներում՝ 27-45 տոկոս [1]: Կարելի է եզրակացնել, որ ՀՀ-ում սոցիալական պաշտպանությանը հատկացվող ծախսերը համահունչ են տնտեսական զարգացման ներկա իրավիճակին:

Ընդհանուր բնույթի հանրային ծառայություններին ուղղվող ծախսերը հանդիսանում են պետական ծախսերի հիմնական ուղղություններից մեկը՝ պետական ծախսերի կառուցվածում ֆինանսավորման ծավալով զբաղեցնելով 2-րդ տեղը: Սրանք այն ծախսերն են, որոնք ուղղվում են կառավարման մարմինների բնականոն գործունեության ապահովմանը: 2023 թ. այս

ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 20.5%, իսկ ՀՆԱ-ի 5.5%: Համեմատության համար նշենք, որ այս ցուցանիշը Վրաստանում, Ադրբեջանում և Թուրքիայում կազմում է համապատասխանաբար 9.1, 18.3, 14.1%, Ռուսաստանի Դաշնությունում՝ 14.1%, Բայթյան երկրներում՝ միջինում 8.5%, սկանդինավյան երկրներում՝ 12.8%, զարգացած եվրոպական երկրներում (Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրիա, Իտալիա)՝ 11.2% [1]:

ՀՀ պաշտպանության ոլորտին ուղղվող ծախսերը կազմել են ընդհանուր ծախսերի 20.6% և ՀՆԱ-ի 5.5%: Համեմատության համար ընդգծենք, որ Սկանդինավյան երկրներում պաշտպանության ոլորտին ուղղվող ծախսերը կազմում են ընդհանուր ծախսերի 2%, զարգացած տնտեսությամբ երկրներում (Ֆրանսիա, Գերմանիա, Ավստրիա, Իտալիա) պաշտպանության ոլորտին ուղղվող ծախսերը կազմում են 1-3%, Բայթյան երկրներում՝ միջինում 5%: Մինչ դեռ ռազմականացված պետություններում Իսրայել (12.2 %), ՌԴ (10.4%), Թուրքիա (4.4%) ծախսերի զգալի մասը բաժին է ընկնում պաշտպանության ոլորտին, Ադրբեջանում այս ցուցանիշը կազմում է 14.9% [3]:

ՀՀ առողջապահական ոլորտի պետական ծախսերի ֆինանսավորման մասնաբաժինը ընդհանուր ծախսերում կազմել է 5.5%, իսկ ՀՆԱ-ի մեջ կազմել է 1.5%: Առողջապահության պետական ֆինանսավորման ծավալների զգալի աճի և տնային տնտեսությունների ծախսերի կրճատման արդյունքում, Հայաստանի հանրապետության մասնաբաժինը առողջապահության ֆինանսավորման կառուցվածքում կազմել է 17.1%, մինչ դեռ մասնավոր հատվածի ֆինանսավորման մասնաբաժինը կազմել է 82.3%² [2, էջ

¹ Ներկայացված են ԱՄՀ տվյալների շտեմարանում առկա ամենաթարմ տվյալները (ըստ երկրների՝ 2020, 2021, 2022)

² Հայաստանի Հանրապետությունում առողջապահության ոլորտը ֆինանսավորվում է պետական և մասնավոր հատվածներից, ինչպես նաև միջազգային տարբեր կառույցներից:

11]: Մինչ դեռ համաշխարհային առողջապահական ծախսերի 60%-ը բաժին է ընկնում պետական աղբյուրներին, 40%-ը ներքին, իսկ միայն 0.21%-ը՝ արտաքին օգնությանը: Ուսումնասիրությունները ցույց են տալիս, որ եկամտի ցածր մակարդակ ունեցող երկրներում առողջապահական ծախսերը հիմնականում ֆինանսավորվում են մասնավոր աղբյուրներից՝ 44% և արտաքին աղբյուրներից՝ 29%, մինչ դեռ եկամտի բարձր մակարդակ ունեցող երկրներում գերակշռում է պետական ծախսերի մասնաբաժինը՝ 70% [14, էջեր 1-3]: Ինչպես տեսնում ենք, ՀՀ-ն այս ոլորտում ունի թերակատարման և ոչ բավարար հասանելիության խնդիր:

ՀՀ կրթության ծախսերի հարաբերակցությունը ՀՆԱ նկատմամբ վերջին տարիներին նվազման միտում է ցուցաբերում, 2023 թ. կազմելով 1.9%: Մինչ դեռ, կրթությանը հատկացվող ծախսերի տեսակարար կշիռը համաշխարհային ՀՆԱ-ում կազմում է 3,7%, Եվրոպական միությունում՝ 5%, հարևան Վրաստանում այս ցուցանիշը կազմում է 3.8%, իսկ Ադրբեջանում 2.9%: Կրթությանն ուղղվող բյուջետային ծախսերը ՀՆԱ նկատմամբ հարաբերակցությամբ ՀՀ-ում գտնվում են խիստ ցածր մակարդակի վրա՝ ինչպես զարգացած, այնպես էլ

զարգացող տնտեսությունների զգալի մասի համեմատությամբ: Հարկ է նաև նշել, որ տնտեսական աճի վրա կրթության ոլորտի ծախսերի դրական ազդեցությունը կարող է ավելի մեծանալ, եթե խթանվի կրթության կապը գիտության և տնտեսության հետ: Օրինակ՝ «ԵՄ զարգացած երկրներում կան բազմաթիվ գիտահետազոտական համալսարաններ՝ որպես կրթություն-գիտություն-բիզնես համագործակցության լավ օրինակ, և բուհերի նման գործունեությունը պետք է զարգացնել ինչպես ԵՄ զարգացող երկրներում, այնպես էլ Հայաստանում» [15, էջ 78]:

Տնտեսական հարաբերությունների ոլորտում կատարվող ծախսերը կազմում են ՀՆԱ-ի 2,1%: Այս ոլորտում պետության կողմից կատարվող միջամտության առաջնային նպատակը տնտեսական գործունեության կազմակերպման համար անհրաժեշտ նախադրյալների ապահովման միջոցով տնտեսության առանձին ճյուղերի աճի խթանումն է: Ծախսերի կառուցվածքի ուսումնասիրությունից բացի շատ կարևոր է առանձին ծախսային հոդվածների և տնտեսական աճի փոխազդեցության ուսումնասիրությունը: Այսպիսով վերոնկարագրյալ մոդելի գնահատման արդյունքում ստացվել է հետևյալ պատկերը.

Գծապատկեր 5. Ռեգրեսիոն գնահատման արդյունքները

Dependent Variable: GDP
 Method: Panel Least Squares
 Date: 04/07/24 Time: 21:12
 Sample: 1 60
 Periods included: 4
 Cross-sections included: 15
 Total panel (balanced) observations: 60

Variable	Coefficient	Std. Error	t-Statistic	Prob.
DEF	-0.121962	0.088740	-3.274367	0.0175
EDU	0.027449	0.117742	6.482443	0.0001
HLT	0.021262	0.058265	3.364914	0.0166
SOC	-0.370657	0.177088	-2.093068	0.0411
ECO	0.054585	0.063269	2.862742	0.0392
C	13.90546	2.084126	6.672083	0.0000

R-squared	0.788015	Mean dependent var	10.73095
Adjusted R-squared	0.784596	S.D. dependent var	0.439074
S.E. of regression	0.143566	Akaike info criterion	0.601179
Sum squared resid	1.910925	Schwarz criterion	0.510613

Գծապատկեր 5-ի տվյալներից ելնելով վերջնական մոդելը կատանա հետևյալ տեսքը.

$$GDP = 0.05ECO - 0.12DEF + 0.02HLT + 0.027EDU - 0.37SOC + 13.9$$

Մոդելավորման արդյունքներով ստացվում է, որ ազգային տնտեսության վրա կատարված ծախսերի աճի ինդեքսի 1 տոկոսային կետով աճը հանգեցնում է եռամսյակային ՀՆԱ աճի

տեմպի 0.05%-ով ավելացման: Եռամսյակային ՀՆԱ աճի տեմպի ցուցանիշի վրա դրական են ազդում նաև առողջապահության (HLT) և կրթության (EDU) ցուցանիշների աճը: Մոդելի մյուս երկու բացատրող փոփոխականները՝ անվտանգության և սոցիալական ծախսերը որոշակի բացասական ազդեցություն են ունենում արդյունքային փոփոխականի վրա:

Պաշտպանության ծախսերի եռամսյակային աճի ինդեքսի 1% աճը ՀՆԱ եռամսյակային աճի ինդեքսը կրճատում է 0.12%-ով, իսկ սոցիալական ծախսերի համապատասխան ցուցանիշը՝ 0.37%-ով:

Հարկ է նշել, որ սոցիալական ծախսերի նման ազդեցությունը ՀՆԱ ցուցանիշի վրա բացահայտում է ՀՀ տնտեսության կարևոր առանձնահատկություններից մեկը՝ նպաստառուների և թոշակառուների մեծ կշիռը: Այսպես, 2022 թ. կենսաթոշակառուների թիվը Հայաստանում կազմել է 468.8 հազար մարդ [4], իսկ ընտանեկան և սոցիալական նպաստ և եռամսյակային հրատապ օգնություն ստացող ընտանիքների թիվը կազմում է 76.9 հազար ընտանիք [4]: 2023 թ. Երեխայի ծննդյան միավազ նպաստ ստացող ընտանիքների քանակը 35.9 հազար է, մինչև երկու տարեկան երեխայի խնամքի նպաստ ստացողների թվաքանակը 39.1 հազար [4]: Վերոգրյալ փաստերը ակնհայտ են դարձնում, որ պետական բյուջետային միջոցների շոշափելի մի մաս ուղղվում է ոչ արտադրողական ծախսերին, ինչպես օրինակ սոցիալական ոլորտի ծախսերն են և պաշտպանության և հասարակական կարգի պահպանման ծախսերը:

Հարկ է նշել, որ ընդհանրապես բյուջետային ծախսերի դրական ազդեցությունը տնտեսական աճի վրա ապագայում կարող է ավելանալ, եթե ֆիզիկական ենթակառուցվածքները էական զարգացում ունենան, ինչպես օրինակ «Հյուսիս-հարավ տրանսպորտային միջանցքի երթուղին՝ Հնդկաստանով, Իրանով, Հայաստանով, Վրաստանով և Եվրոպայով: Այս երթուղին 30%-ով ավելի էժան է և 40%-ով ավելի կարճ, քան ներկայիս ավանդական երթուղին» [16, էջ 10]:

Եզրակացություն. Ամփոփելով, կարելի է եզրակացնել, որ Հայաստանում պետական բյուջեի արտադրողական ծախսերի աճը, ինչպես օրինակ կրթության, առողջապահության և ազգային տնտեսության վրա կատարված ծախսերն են, նպաստում են ՀՆԱ աճի տեմպին, մինչդեռ պետական միջոցների ուղղումը ոչ արտադրողական ծախսերին, ինչպես օրինակ պաշտպանության և սոցիալական ոլորտի ծախսերն են, բացասաբար է անդրադառնում ՀՆԱ աճի տեմպի ցուցանիշի վրա: Այս առումով, պետական կարգավորման գործընթացում ծախսային քաղաքականության դերակատարության բարձրացման տեսանկյունից խիստ կարևոր նշանակություն ունի համալիր միջոցառումների իրականացումը՝ մի կողմից ուղղված բյուջետային ծախսերի ավելացմանը, մյուս կողմից՝ բյուջետային ծախսերի կառուցվածքի օպտիմալացմանը: Տնտեսական աճի վրա ազդեցության տեսակետից նախընտրելի է նվազեցնել ոչ արտադրողական ծախսերը,

միաժամանակ մեծացնելով արտադրողական ծախսերը: Իհարկե, ներքին և արտաքին սպառնալիքների դեպքում անվտանգության ապահովումը, սոցիալ-տնտեսական կայունության պահպանման և պետության կայուն գործելու անհրաժեշտ պայմանն է: Այնուհանդերձ, հարկավոր է կշռադատված կերպով մոտենալ ոչ արտադրողական ծախսերի անհրաժեշտ մակարդակի որոշմանը, հասկանալ այն այլ-ընտրանքային գինը, որը մենք վճարում ենք բյուջետային ծախսերի այս կամ այն կառուցվածքը ձևավորելիս:

Օգտագործված գրականության ցանկ

1. ԱՄՀ տվյալների շտեմարան, <https://data.imf.org>
2. Առողջապահության ազգային հաշիվներ: - Երևան, 2023
3. Համաշխարհային բանկի տվյալների բազա, <https://data.worldbank.org/indicator>
4. Վիճակագրական կոմիտե, <https://armstat.am/am/?nid=82&year=2023>
5. Ֆինանսների նախարարություն, Պետական բյուջեի 2023 թվականի տարեկան հաշվետվություն https://minfin.am/hy/page/petakan_byujei_hashvetvut_yun_2023t_tarekan
6. **Баранова Л., Врублевская О. и др.**, “Бюджетный процесс в РФ”: Учебное пособие. – М.: Издательство “Перспектива”: ИНФРА – М. 2008.
7. **Голуб Л.**, Анализ динамики мультипликатора государственных расходов в Российской Федерации // Вестник Хабаровского государственного университета экономики и права, 2018, № 3 (95)
8. **Дробозиной Л.**, Общая теория финансов. 1995
9. **Рыбалкина В.**, “Анализ экономики”. Страна, рынок, фирма. Учебник. – М. / Международные отношения. 2008.
10. **Романовский М., Врублевская О.**, Основы теории и практики государственных финансов. – СПб. 1998.
11. “Финансы. Денежное обращение”. Кредит.: Учебное пособие. – М.: Финансы и статистика, 2007.
12. **Bose N., Haque M., Osborn D.**, “Public expenditure and economic growth: A disaggregated analysis for developing countries.” // The Manchester School, 75 (5). 2007.
13. **Butkiewicz J., Yanikkaya H.**, “Institutions and the impact of government spending on growth” // Journal of Applied Economics, 2011, 14 (2).
14. Global expenditure on health: Public spending on the rise?, Global report WHO, 2021
15. **Grigoryan K.** Study of the Peculiarities of Export Developments in EU Member Countries and in Armenia. // Romanian Journal of European Affairs, 2012, Vol. 12, No. 3, pp. 65-82. Available at SSRN: <https://ssrn.com/abstract=2142370> or <http://dx.doi.org/10.2139/ssrn.2142370>
16. **Grigoryan K., Arpanahi A.** Perspectives of Armenian: Iranian economic relations within Belt and Road Initiative, // Ordnungspolitische Diskurse, 2022

- No. 2022-8, OrdnungsPolitisches Portal (OPO), Erfurt. pp.1-12. Available at: <https://www.econstor.eu/bitstream/10419/265514/1/1819529398.pdf>
17. **Grigoryan K., Minasyan S.** Income convergence in developing economies. // Annali d'Italia, scientific journal of Italy, 2020 №13, VOLUME 1, Florence, Italy, pp. 18-22. Available at: <http://www.itadiana.com/wp-content/uploads/2020/11/Annali-d%E2%80%99Italia-%E2%84%9613-2020-part-1.pdf>
 18. **Grigoryan K., Petrosyan G., Vardanyan K., Avagyan G.** Assessment of the effects of public investment on GDP growth: case of Armenia. // Sciences of Europe, 2021, No. 78, Vol. 2, pages 46-60. DOI: 10.24412/3162-2364-2021-78-2-46-60, <https://www.europe-science.com/wp-content/uploads/2021/09/Sciences-of-Europe-No-78-2021-Vol.-2.pdf>
 19. **Gwartney J., Lawson R. and Holcombe R.** “The Size and Functions of Government and Economic Growth” // The joint Economic Committee (JEC) of United State Congres, W.: Washington DC. 1998.
 20. **Hasnul A.** “The effects of government expenditure on economic growth: the case of Malaysia” // MPRA Paper. 2015.
 21. **Nyasha S.** “The impact of public expenditure on economic growth: A review of international literature” // Folia Oeconomica Stetinensia, 2019, Volume 19 Issue 2.
 22. **Shahid A., Rabbi F., Hayat U., Ali N.** “The composition of public expenditure and economic growth: Evidence from Pakistan” // International Journal of Social Economics, 2013, 40 (11).
 23. **Straub R. and Tchakarov I.** “Assesing the Impact of a Change in the Composition of Public Spending: A DSGE Approach”. // IMF Working Paper 2007No. 795.

Сдана/Հանձնվել է՝ 21.06.2024

Рецензирована/Գրախոսվել է՝ 12.07.2024

Принята/Ընդունվել է՝ 19.07.2024